ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

«Չարենցավանի Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի անվան N 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը ստորև ներկայացնում է իր կարիքների համար ձևավորման ծառայությունների և աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ-Ն3ՊՈԱԿ-ՄԱԾՁԲ-2023/4» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2023 թվականի ապրիլի 20-ին կնքված N «ՀՀ-Ն3ՊՈԱԿ-ՄԱԾՁԲ-2023/4» պայմանագրում 2023 թվականի մայիսի 29-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթերի պատճենները:

Փոփոխության առաջացման պատճառ: Պայմանագրով սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը. «Ձևավորման ծառայություններ և աշխատանքներ: Կրթական, մշակութային, սպորտային և դպրոցում կազմակերպվող այլ միջոցառումների կազմակերպման նպատակով պաստառների և այլ անհրաժեշտ պարագաների տպագրություն, տեղադրում և միջոցառումների վայրում այլ ձևավորման ծառայություններ:»:

Փոփոխության նկարագրություն: Լրացուցիչ ծառայությունների և աշխատանքների անհրաժեշտությունով պայմանավորված, 20.04.2023թ. կնքված N «ՀՀ-Ն3ՊՈԱԿ-ՄԱԾՁԲ-2023/4» գնման պայմանագրի տեխնիկական բնութագիրը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ անփոփոխ թողնելով պայմանագրով սահմանված ընդհանուր գինը. «Ձևավորման ծառայություններ և աշխատանքներ: Կրթական, մշակութային, սպորտային և դպրոցում կազմակերպվող այլ միջոցառումների կազմակերպման նպատակով պաստառների և այլ անհրաժեշտ պարագաների տպագրություն, տեղադրում և միջոցառումների վայրում այլ ձևավորման ծառայություններ: Սղոցման, մշակման և հարդարման ծառայությունների մատուցում: Արհեստական քարից ցայտաղբյուրի պատրաստում և տեղադրում:», որի վերաբերյալ կողմերի միջև կնքվել է համապատասխան համաձայնագիր:

Փոփոխության հիմնավորում: 20.04.2023թ. կնքված N «ՀՀ-Ն3ՊՈԱԿ-ՄԱԾՁԲ-2023/4» գնման պայմանագրի 7.5-րդ կետ, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետ:

Պատվիրատու՝ **«Չարենցավանի Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի անվան N 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ**